




ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ք



- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	6
Գյումրի	14
Վանաձոր	16
Ալավերդի	18
Հրազդան	21
Արարատ	24
Ծաղկաձոր	29
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	34
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ	36
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	36
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	40
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	44
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	49
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	52
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	55
ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2019թ. 1-ին եռամսյակում	58
Արաքս գետ	59
ԹԱՓՈՆՆԵՐ	62
Հավելված 1. ՀՀ գետերի ջրերի որակը 2019թ. 1-ին եռամսյակում	63
Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտակետերը	78
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	82
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	83
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	83
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	84
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը	85
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	86
Ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների նորմերը	87

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրքում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի, մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի և աղբավայրերի հարակից տարածքների հողերի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվություն՝ 2019 թվականի 1-ին եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու (փոշու մեջ որոշվող մետաղների) և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 23 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 25-ի N876-Ն հրամանի:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում է մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները:

▪ «Եվրոպայում մեծ հետազոտությունների վրա օդի ատոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

▪ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ՍԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի և ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2019թ. 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայան, որոնցից չորսում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են նաև ավտոմատ դիտարկումներ, և 211 շարժական պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հունվար, փետրվար, մարտ ամիսներին ակտիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 3445 փորձանմուշ: Հանրապետության 10 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է մթնոլորտային օդի 4742 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների շարժական դիտակետերում կատարվել է մթնոլորտային օդի՝ համապատասխանաբար 49177 և 28298 ավտոմատ դիտարկում:

Բնակավայրերի մթնոլորտային օդի փոշում որոշվել են մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի*** և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2019թ. 1-ին եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 49177 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1669 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1054 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

* կախված մասնիկներ

** անհիդրիդ ծծմբային

*** ածխածնի օքսիդ

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները
(ակտիվ նմուշառում)*

Հունվար

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.022	0.105 (դիտ. № 7)	125	6
Ազոտի երկօքսիդ	0.04	0.010	0.020 (դիտ. № 2)	125	-
Փոշի	0.15	0.131	0.415 (դիտ. № 18)	123	31
Գետնամերձ օզոն	0.03	0.005	0.021 (դիտ. № 1)	125	-


Փետրվար

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.029	0.074 (դիտ. № 7)	140	14
Ազոտի երկօքսիդ	0.04	0.012	0.051 (դիտ. № 18)	140	2
Փոշի	0.15	0.128	0.564 (դիտ. № 2)	135	39
Գետնամերձ օզոն	0.03	0.005	0.020 (դիտ. № 2)	140	-



Մարտ


Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.022	0.065 (դիտ. № 18)	155	10
Ազոտի երկօքսիդ	0.04	0.015	0.058 (դիտ. № 2)	155	1
Փոշի	0.15	0.122	0.431 (դիտ. № 2)	151	40
Գետնամերձ օզոն	0.03	0.005	0.017 (դիտ. № 2)	155	-

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնոքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.











Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Հանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Հանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Երևանի սահմանագիծ



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Qjnlfph



Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 74 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասսիվ նմուշառման 563 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան մարտին գերազանցել է ՍԹԿ-ն 1.1 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:



Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 673 փորձանմուշ, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման 523 փորձանմուշ:

Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաններն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները*:



* Վանաձոր քաղաքի որոշ տվյալներ տեխնիկական պատճառներով չի ներկայացվում (դիտակայաններից մեկի ապօրինի տեղափոխման արդյունքում որոշակի ժամանակահատված դիտակայանը չի աշխատել)

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.





Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:



2019 թվականի 1-ին եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 28298 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 648 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1005 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հունվարին ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները փետրվարին և մարտին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվարին գերազանցել է ՍԹԿ-ն 1.3 անգամ, մարտին՝ 1.3 անգամ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվարին չի գերազանցել ՍԹԿ-ն: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պատիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Զանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)





Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:

Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 120, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 441 փորձանմուշ:



Մարտին փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.4 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




* Հրազդան քաղաքի փոշու տվյալները հունվար և փետրվար ամիսներին տեխնիկական պատճառներով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Հանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար





Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




www.armmonitoring.am


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



- Պայմանական նշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակետեր
 - ▲ Արդյունաբերական կետեր
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Գետային ցանց
 - Բնակավայրերի սահման
 - ▨ Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




www.armmonitoring.am

Արարատ



Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 84 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 308 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2019 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 109 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաջարան քաղաքի 15 դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 142 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Չարենցավան քաղաքի 10 դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 233 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 177՝, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 364 փորձանրմուշ:



Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.





*Անշարժ դիտակայանում հունվար ամսին ակտիվ նմուշառմամբ դիտարկումներ չեն իրականացվել:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրերի սահման



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)



Մթնոլորտային տեղումներ

2019թ. 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 15 փորձանմուշ (ձյուն, թաց ձյուն): Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահա- դրողականություն (մկՍմ/սմ)	Մուլֆատ իոն (նգ/լ)	Քլորիդ իոն (նգ/լ)	Նիտրատ իոն (նգ/լ)	Ֆտորիդ իոն (նգ/լ)	Անոնիում իոն (նգ/լ)
09-10.01.2019	6,44	23,8	1,39	1,00	1,93	<0,005	0,922
15-16.01.2019	6,16	27,5	3,38	1,19	4,18	<0,005	1,236
17-18.01.2019	6,01	16	1,53	1,69	1,03	<0,005	0,394
02-03.02.2019	6,05	18,8	1,90	1,20	2,04	<0,005	0,924
15-16.02.2019	5,72	19,6	2,29	1,22	3,07	<0,005	1,375
27-28.02.2019	6,07	17,6	1,73	1,27	1,09	<0,005	0,251
28.02-01.03.2019	6,79	8,6	0,98	0,48	1,00	<0,005	0,599
03-07.03.2019	6,47	21,4	1,54	2,04	2,02	<0,005	0,663
16-17.03.2019	6,67	57,1	7,73	2,22	5,88	<0,005	3,571
17-18.03.2019	6,09	18,4	1,10	2,10	1,55	<0,005	0,910
19-20.03.2019	6,17	18,2	2,21	0,63	2,31	<0,005	1,729
24-25.03.2019	6,46	34,6	4,54	1,41	3,12	<0,005	2,079
26-27.03.2019	6,31	16,7	0,87	1,22	1,64	<0,005	1,091
29-30.03.2019	6,26	23,5	4,16	0,37	2,79	<0,005	1,946
30-31.03.2019	5,67	13,4	1,49	1,26	0,87	<0,005	0,885

«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»



Մթնոլորտային օդ

Ամբերդի անշարժ կայանում 2019թ. 1-ին եռամսյակում վերցվել է մթնոլորտային օդի 45 և փոշու 14 փորձանմուշ:

Մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում: Ավտոմատ եղանակով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է մթնոլորտային օդի 1368 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի ($U\theta\Gamma_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($U\theta\Gamma_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել $U\theta\Gamma$ -ները:

Մթնոլորտային օդում ամոնիակի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Մթնոլորտային տեղումներ

2019թ. 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 5 փորձանմուշ (ձյուն): Վերցված փորձանմուշներում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահա- ղորդակա- նություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
17.03.2019	7,009	34,50	0,933	1,949	1,143	<0,005	2,110
23.03.2019	6,368	48,20	3,864	4,384	2,050	0,012	3,034
27.03.2019	5,957	19,80	1,521	1,297	1,408	<0,005	1,408
28-29.03.2019	5,878	29,90	1,934	3,528	2,127	0,008	1,486
30.03.2019	6,245	17,00	0,964	1,136	0,775	<0,005	1,437

Մակերևութային ջրեր

2019թ. 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել է հանրապետության 38 գետի, Երևանյան լճի, Ախուրյանի ջրամբարների և Արփա-Սևան թունելի դիտակետերից, որտեղից վերցվել է 117 փորձանմուշ: Ջրի որակը բնութագրվել է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում*, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 33 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի ջրի որակը Մալիտակից ներքև հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև հատվածում փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարցիգետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտ ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):




Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկագրի 77-րդ էջում աղյուսակի տեսքով

Աղստև գետի ջրի որակը Դիլիջանից վերև հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Դիլիջանից ներքև հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Իջևանից ներքև և վերև հատվածներում ջրի որակը փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):







Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով:



ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետերի նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



www.armmonitoring.am



Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք


Մակերևութային ջրեր

Ախտորյան գետի ջրի որակը Գյումրիից վերև և Բագարանից վերև հատվածներում մարտ ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտ ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատից հարավ և Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածներում հունվար և փետրվար ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատից հարավ ընկած հատվածում մարտ ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս): Մեծամոր գետի ջրի որակը Ռանչյարից ներքև ընկած հատվածում հունվար և փետրվար ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):









Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 6 շատրվանող և 16 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով.





ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը
մարտ / 2019 թվական



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր


Քասախ գետի ջրի որակը Ապարանից վերև ընկած հատվածում փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս): Ապարանից ներքև ընկած հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև ընկած հատվածներում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Քասախ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Շաղվարդ գետի ջրի որակը Փարպիից ներքև ընկած հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Հրազդան գետի Քաղսիից ներքև ընկած հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգելից ներքև ընկած հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Հրազդան գետի գետաբերանի հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Հրազդան գետի ջրի որակը Գեղանիստ գյուղի մոտ հունվար, փետրվարին և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունվար ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվար և մարտ ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Տանձաղբյուր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև ընկած հատվածում փետրվար ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):














Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով (N 1297 դիտակետում դիտվել է ծախսի շատ փոքր արժեք՝ 0,03լ/վ):





ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը





ՊԱՅՄԱՆԱՎԱՐ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Ջրմբ. որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետերի նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



www.armmonitoring.am

Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ձկնագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Մարտունի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):




Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնադրյուրում, 6 շատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը
մարտ / 2019 թվական



Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր



Արփա գետի ջրի որակը Վայքից վերև և ներքև ընկած հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Եղեգնաձորից վերև ընկած հատվածում մարտ ամիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենիից ներքև ընկած հատվածում մարտ ամիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Եղեգիս գետի ջրի որակը Շատինից ներքև ընկած հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արփա-Սևան թունելի ջրի որակը Ծովինար գյուղից վերև ընկած հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղադիրքը
մարտ / 2019 թվական



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Կարձևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրիից վերև և գետաբերանի հատվածներում մարտ ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը Քաջարանից վերև ընկած հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաջարանից ներքև և Կապանաի օդանավակայանից ներքև ընկած հատվածներում մարտին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Կապանից վերև ընկած հատվածում մարտին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Գեղի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայքից վերև ընկած հատվածում մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Որոտան գետի ջրի որակը Միսիանից վերև և ներքև ընկած հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Որոտան գետի ջրի որակը Տաթև ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Միսիան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Վարարակ գետի ջրի որակը Գորիսից վերև ընկած հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գորիսից ներքև ընկած հատվածում մարտին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):






Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



**ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը և ստորերկրյա ջրերի տեղագիրքը
մարտ / 2019 թվական**



ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2019թ. 1-ին եռամսյակում

Ախուրյանի ջրամբարում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Երևանյան լճում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հունվար

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹԿՊ5, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	

Փետրվար

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ֆոսֆատ իոն	4-րդ	

Մարտ



Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	ԹՔՊ	3-րդ	4-րդ
		ԹԿՊ5	4-րդ	
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹԿՊ5, ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ֆոսֆատ իոն	4-րդ	

Արաքս գետ

2019թ. 1-ին եռամսյա-
կում վերցրվել են փորձանմուշ-
ներ Արաքս գետի ջրի 8 դիտա-
կետից: Վերցված ջրի փորձա-
նմուշներում որոշված ցուցա-
նիշներից, ըստ ձկնատնտեսա-
կան ՍԹԿ-ներով գնահատման,
դիտվում է վանադիումով, որոշ
փորձանմուշներում պղնձով,
քրոմով, մանգանով, երկաթով և
ալյումինով բարձր աղտոտվա-
ծություն: Որոշված մյուս ցու-
ցանիշներից գերազանցվել են
ԹԿՊ₅-ի, ԹԶՊ-ի, ամոնիում,
նիտրիտ և սուլֆատ իոնների,
ցինկի, կոբալտի, նիկելի, ման-
գանի և սելենի ՍԹԿ-ները: Ա-
րաքս գետի աղտոտվածության
գերազանցումների վերաբերյալ
մանրամասն տեղեկություն
ըստ առանձին ամիսների
տրվում է աղյուսակների տես-
քով:

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ

«Արաքս գետի հայ-իրանական համատեղ մոնիթորինգ»



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Գյուղեր
- ▲ Գետերի որակի
նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ



www.armmonitoring.am

Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2019թ. 1-ին եռամսյակում

Փետրվար


	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)													
